Իմացեք ավելին աղոթքի մասին

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ Ա

Որո՞նք են այն մի քանի պատճառները, որ Երկնային Հայրը կամենում է, որ մենք աղոթենք, մինչդեռ սատանան գայթակղում է մեզ չաղոթել:

- Սատանան ի՞նչ եղանակներով կարող է գայթակղել մեզ չաղոթել:

Սատանան կարող է «սովորեցել [մեզ], որ [մենք] չպետք է աղոթենք»՝ փորձելով համոզել մեզ այն սուտը, որ մենք այլևս արժանի չենք աղոթելու, քանի որ մեղանչել ենք:

Խորհեք, թե ինչ օրինություններ է սատանան փորձում խանգարել մեզ ստանալ, երբ դուք անում եք հետևյալը.

> Ժամանակ հատկացրեք աղոթքի մասին ուսումնասիրություն կատարելու համար: Կարող եք աղոթքի մասին նյութեր փնտրել Աստվածաշնչի բառարանում կամ Սուրբ գրքերի ուղեցույցում, որոնել Ավետարանական թեմաներում կամ փնտրել գերագույն համաժողովի ելույթներում, որոնցում խոսվում է աղոթքի մասին: Ուսումնասիրելիս փնտրեք նյութեր աղոթքի օրինությունների մասին: Կարող եք նաև մտածել ձեր կյանքում աղոթքից ստացած օրինությունների մասին: Հիմնվելով ձեր ուսումնասիրության և փորձառությունների վրա՝ մտածեք, թե ինչու է Երկնային Հայրը կամենում, որ աղոթենք, և ինչու է սատանան գայթակղում մեզ չաղոթել:

Հնարավորության դեպքում լրացուցիչ պատճառներ գտեք «Աստված կամենում է, որ աղոթեք» տեսանյութը (3:28) դիտելիս (հասանելի է այստեղ՝ ChurchofJesusChrist.org): Տեսանյութը Քեյլայի փորձառության մասին է, որտեղ նա աղոթում է և միաժամանակ դժվարությունների է բախվում:

Գրեք առնվազն երկու ճշմարտություն, որ սովորեցիք աղոթքի մասին: Ներառեք, թե ինչու եք կարծում, որ Երկնային Հայրը կամենում է, որ մենք աղոթենք, իսկ սատանան գայթակղում է մեզ չաղոթել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ Բ

Ի՞նչ է նշանակում՝ «միշտ աղոթեք»:

Կարող եք նշել «միշտ աղոթեք և չթուլանաք» արտահայտությունը (2 Նեփի 32.9):

Կարդացեք Ալմա 34.21, 27 հատվածը և գտեք մտքեր, թե ինչ կարող էր նշանակել միշտ աղոթելը:

- «Ե՛վ առավոտյան, և՛ կեսօրին, և՛ երեկոյան» աղոթելը (Ալմա 34.21) ինչո՞ւ կարող է օրինություն լինել:
- Մենք մեր սրտերն ինչպե՞ս կարող ենք առ Աստված ուղղել, նույնիսկ երբ չենք աղոթում:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարը մի օրինակ է բերել այն մասին, թե ինչ կարող է նշանակել՝ միշտ աղոթել.

> Առավոտյան աղոթքով խորհրդակցեք Երկնային Հոր հետ: . . .
>
> Օրվա ընթացքում մենք աղոթքը պահում ենք մեր սրտում՝ շարունակ աջակցություն և ուղղորդում ստանալու համար: . . .
>
> Մեր օրվա վերջում մենք կրկին ծնկի ենք իջնում և հաշվետվություն տալիս մեր Հորը: Մենք վերանայում ենք օրվա իրադարձությունները և սրտանց շնորհակալություն հայտնում մեր ստացած օրինությունների և օգնության համար: Մենք ապաշխարում ենք և Տիրոջ Հոգու օժանդակությամբ գտնում այն ճանապարհները, որոնցով կարող ենք գործել և վաղը ավելի լավը դառնալ: Այսպիսով, մեր երեկոյան աղոթքը կառուցվում է առավոտյան աղոթքի վրա և դառնում դրա շարունակությունը: Իսկ մեր երեկոյան աղոթքը նաև նախապատրաստություն է իմաստալից առավոտյան աղոթքի համար: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Միշտ աղոթեք», *Լիահոնա*, նոյեմբեր 2008թ., 41–42)

Ձեր բառերով գրեք, թե ըստ ձեզ, ինչ է նշանակում՝ միշտ աղոթել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ Գ

Երկնային Հայրն ինչպես է մեր ջանքերը նվիրագործելու մեր հոգու բարօրության կամ օգուտի համար:

Նեփին ուսուցանել է. «դուք պետք է աղոթեք Հորը, Քրիստոսի անունով, որ նա նվիրագործի ձեր կատարումը ձեզ համար, որպեսզի [այն] լինի ձեր հոգու բարօրության համար» (2 Նեփի 32.9): *Նվիրագործել* նշանակում է որևէ սրբազան կամ նվիրյալ գործ կատարել:

Մտածեք առնվազն մեկ օրինակ, որտեղ Երկնային Հայրն օրհնել է մեկին, որն աղոթել և ձգտել է անել այն, ինչ Նա կամենում էր: Դա կարող է լինել անձնական փորձառություն, մեր օրերի օրինակ, կամ կարող եք գտնել մի պատմություն սուրբ գրություններում (անհրաժեշտության դեպքում օրինակ գտնելու համար օգտվեք Թեմաների ուղեցույցից, Ցանկից կամ Սուրբ գրքերի ուղեցույցից):

Գրեք օրինակը և ինչ է ուսուցանում ձեզ այդ օրինակն այն մասին, թե Երկնային Հայրն ինչպես կօրհնի Իր կամքն աղոթելով կատարելու մեր ջանքերը:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.